

ՀԵՆՐԻԿ ՍԵՆԿԵՎԻՉ

1846-1916



ՅՈՐ ԵՐԹԱՍ

Մեծանուն լեհ գրող **Հենրիկ Սենկևիչը** ծնվել է Վոյա Օկշեյսկայա գյուղում, որը գտնվում էր Ռուսական կայսրության պատմական նահանգներից մեկում՝ Լեհական թագավորությունում: Ընդամենը տասներկու տարեկան էր, երբ ընտանիքը տեղափոխվեց Վարշավա: Ապագա գրողը չէր էլ կարող ենթադրել, որ այդ քաղաքը կդառնա իր հիմնական բնակավայրը: Չգիտեր, որ ինքն այնքան կկարոտի իր ծննդավայրի բնությանն ու գյուղական միջավայրի պատկերներին, որ գիմնագիտ գնալու կարճ ճանապարհի փոխարեն կընտրի ավելի երկարը, որպեսզի կարողանա մոտ գտնվել այդ փողոցի խանութներից մեկում վաճառվող բազմաթիվ ու բազմատեսակ թռչուններին ու հիանալ նրանց երգով:

Ուսումնառության տարիներին Սենկևիչը հաճախ էր փոխում դպրոցները, առաջադիմությամբ աչքի չէր ընկնում, սակայն լեհերենը, պատմությունն ու ընդհանուր աշխարհագրությունը առանձնանում էին. այդ առարկաներից նա ուներ գերազանց գիտելիքներ ու գնահատականներ:

1862թ. Ալեքսանդր 2-րդի որոշմամբ Վարշավայի պալատներից մեկի շենքը տրամադրվում է նորաստեղծ բարձրագույն ուսումնական հաստատութ-

յանը՝ Գլխավոր դպրոցին: 1866թ. ապագայում նշանավոր դարձած բազմաթիվ պատանիների հետ այդ դպրոց է ընդունվում նաև Հ. Սենկևիչը: Շուտով պարզ է դառնում, որ դասախոսական կազմի պահպանողական հայացքներն ու դասավանդման մեթոդները չեն բավարարում նոր ժամանակների շունչ ու գաղափարները ոգևորությամբ ընդունած և կրթության եվրոպական չափանիշներ ակնկալող ուսանողներին: Անկախ այս հանգամանքներից՝ ուսանողների գլխին սկսում են մութ ամպեր կուտակվել 1896թ. փակվում է Գլխավոր դպրոցը, և նրա տեղը բացվում է Վարշավայի համալսարանը, որտեղ դասավանդումը ոչ թե նրանց մայրենի լեզվով էր, այլ ռուսերենով: Սակայն կար մի առավելություն. դասախոսական նախկին կազմը և հատկապես հումանիտար առարկաների ծրագրերը փոխված էին: Սենկևիչն ու նրա ուսանողական ընկերները հասցնում են սովորել մինչև 3-րդ կուրսը, սակայն սկսվում են խռովություններ, ու ընկերները բաժանվում են. կյանքը նրանցից ամեն մեկին մի տեղ է նետում:

Սենկևիչը սիրել է ճամփորդել, ուսումնասիրել պատմական վայրերը, միաժամանակ կարդացել ու զարգացրել է պատմության իր իմացությունը, որոնք էլ հետագայում հիմք են ծառայել նրա մնայուն ու չխամրող պատմավեպերի համար:

Սենկևիչը արձակի վարպետ է: 1874թ. լույս է տեսնում նրա առաջին ստեղծագործությունը, որին հաջորդում են մեկը մյուսից արժեքավոր գործերը, որոնք սիրով ու հետաքրքրությամբ են ընդունվում ընթերցողների կողմից ու մեծ հռչակ ապահովում արձակագրի համար: Ահա նրա պատմական վեպերից մի քանիսը՝ «Կրակով և թրով», «Զրիեղեղ», «Պան Վոլոդիևսկի», որը Լեհաստանի և հարևան երկրների՝ 17-րդ դարի երկրորդ կեսի պատմությանը վերաբերող եռագրություն է, «Խաչակիրներ»՝ նվիրված է XIV դարի վերջից XV դարի սկզբին լեհերի և լիտվացիների պայքարին:

Սենկևիչը «Յո՞ երթաս» («Կվո Վադիս». անվանումը լատինական ծագում ունի, որ նշանակում է «Ո՞ր ես գնում») պատմական վեպում (1894-1896) պատկերում է մ.թ. I դարում քրիստոնյաների նկատմամբ հռոմեական Ներոն կայսեր հալածանքները:

Վեպը գեղեցկուհի Լիգիայի և հռոմեացի երիտասարդ պատրիկ (տիրող դասի ներկայացուցիչ Հին Հռոմում) Մարկոս Վինիկիոսի՝ ամեն խոչըն-

դոտ հաղթահարող սիրո պատմությունն է, որին ընթերցողը հետևում է շունչը պահած: Հեղինակը սիրո պատմությունը վարպետորեն միահյուսում է մ.թ. 64 թվականի պատմական իրադարձություններին, երբ դաժան բռնապետ Ներոն կայսեր քմահաճույքով մարդիկ տանջալույ էին արվում իրենց ընդունած կրոնի՝ քրիստոնեության համար: Ներոնը, ցանկանալով պահպանել իր իշխանությունը Հռոմում, այրում է այն ու դրանում մեղադրում քրիստոնյաներին: Այնուհետև սկսում է փոքրից մեծ ոչնչացնել նրանց իր իսկ հորինած ամենամարդկային ու խելահեղ ձևերով: Վեպը պատմություն է նաև հավատի զորության ու նրա հաղթանակի մասին:

Հրատարակվելուց հետո պատմավեպը թարգմանվել է ավելի քան 50 լեզուներով:

Այս գործի շնորհիվ Հենրիկ Սենկևիչն արժանացել է Նոբելյան մրցանակի:

Մեջբերումներ և թևավոր խոսքեր «Յո՛ երթաս» վեպից

- «Հավատով կարելի է գետինը շարժել հիմքից»:
- «Աստվածները չեն սիրում կրկնել»:
- «Կյանքը ծիծաղի է արժանի, ուստի ծիծաղում եմ»:
- «Եվ մտաբերեց, թե ինչպես սեր էր սովորեցնում մարդկանց, ինչպես նրանց ասում էր, որ թեկուզ ամբողջ կարողությունը աղքատներին բաժանած լինեին և թեկուզ բոլոր լեզուներին, բոլոր գաղտնիքներին և բոլոր գիտություններին տիրելիս լինեին, ոչինչ կլինեին առանց սիրո, որ գգվող է, համբերող է, որ չարություն չի գործում, փառքի չի ձգտում, ամեն ինչ տանում է, ամենին հավատում է, ամեն բանի հույս ունի, ամենին դիմանում է»:
- «Ճշմարտությունը բնակվում է մի այնպիսի բարձր տեղ, որ աստվածներն իրենք չեն կարող տեսնել նրան Օլիմպոսի կատարներից»:
- «Երբ վերջին թասը դատարկված է, ժամանակն է հեռանալու, ննջելու»:
- «Ծերությունը, անզորությունը կյանքի վերջին տարիների տխուր ընկերակիցներ են»:

- «Ով գիտե ապրել, պետք է իմանա և մեռնել»:
- «Առանց հավատի չի կարող առաքինություն լինել»:
- «Ոչ ոք ապահով չէր իր կյանքի և կարողության նկատմամբ: Իրավունքը դադարել էր պաշտպան լինելուց: Մարդկային արժանավորությունն ու առաքինությունը մարել էին, լուծվել էին ընտանեկան կապերը, և մանրացած սրտերը չէին համարձակվում մինչև անգամ հույս տաճել»:

ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

1. Կարդա՛ վեպը, ներկայացրո՛ւ դիպաշարն ու բովանդակությունը:
2. Բնութագրի՛ր կերպարները:
3. Համացանցից գտի՛ր ու դիտի՛ր ֆիլմը, կարծի՛ք հայտնի՛ր, թե որքանով է այն հաջողված ու որքանով է համապատասխանում վեպի գաղափարին:
4. Կարդա՛ վեպից մեջբերումներն ու թևավոր խոսքերը, մտքերից ընտրի՛ր քեզ դուր եկածը, ընկերներիդ հետ քննարկում կազմակերպի՛ր դրա շուրջ:
5. Ներկայացրո՛ւ, թե մտքերից որն է համահունչ 21-րդ դարի իրողություններին: Հիմնավորի՛ր պատասխանդ: